



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
**ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

Երևան, 0025, Արովյան 52<sup>ա</sup> • Республика Армения, Ереван, 0025, Абовяна 52<sup>а</sup> • 52<sup>а</sup> Abovyan,  
0025, Yerevan, Republic of Armenia(+374 10) 54-43-91/94,95,96/1 ՀՀ -37, armphilology@ysu.am, [www.y-su.am](http://www.y-su.am)

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Թ Ի Վ 3**

**ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝**

**2022 Թ. ՄԱՐՏԻ 23 - ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ**

*Օրակարգում՝*

1. Փոքր հաստիքներ ունեցող ամբիոնների միացման հարցը:
2. Մանկավարժական պրակտիկայի արդյունքների ամփոփում:
3. Ֆակուլտետում աշխատանքային կարգապահության և դասերի հաճախումների հարցը:
4. Ընթացիկ հարցեր:

Սկսելով գիտական խորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ գիտխորհրդի 36 անդամներից նիստին մասնակցում է 33-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ընթերցեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն բաց քվեարկությամբ:

**Օրակարգի 1-ի հարցի՝** փոքր հաստիքներ ունեցող ամբիոնների միացման հարցի կապակցությամբ՝

**Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն** – Բ.գ.դ., պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Վ. Գաբրիելյանը, Ա. Աբաջյանը, Բ.գ.թ., դոց. դոց. Վ. Պետրոսյանը, Թ. Տոնոյանը, Ն. Դիլբարյանը, Ս. Ավետյանը, Ա. Զրբաշյանը, մագիստրատուրայի 2 – րդ կուրսի ուսանող Հ.

Հովակիմյանը և ուրիշներ: Պրոֆ. Ա. Ավագյանը նախ հիշեցրեց, որ Երևանի պետական համալսարանում սկսվել է մի գործընթաց, որը, ելնելով տնտեսական նպատակահարմարությունից, ներկայումս գործող փոքրաթիվ հաստիքներ ունեցող ամբիոնները պետք է միավորվեն: Պրոֆ. Ա. Ավագյանը ավելացրեց նաև, որ նախորդ նիստից հետո համապատասխան ամբիոնների վարիչների հետ քննարկվել են միացումների հնարավոր այլ տարբերակներ ևս, և այսօր գիտխորհրդին առաջարկվում է միավորել ընդհանուր լեզվաբանության և հայոց լեզվի պատմության ամբիոնները, իսկ գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնը միավորել ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի հետ, սակայն ամբիոնի գրաքննադատության ժամերը համապատասխան դրույքով տեղափոխել հայ նորագույն գրականության ամբիոնի կազմ: Այնուհետև ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ Վ. Պետրոսյանը գիտխորհրդի անդամների ուշադրությունը հրավիրեց այն հանգամանքի վրա, ընդհանուր լեզվաբանության ամբիոնի՝ որպես ինքնուրույն միավորի կորուստը կհանգեցնի տվյալ գիտաճյուղի կորստի, նվազագույնը՝ որակական էական անկման, որովհետև հարցականի տակ կդրվի առաջին հերթին նոր գիտական կադրերի պատրաստումը: Ըստ նրա՝ այդ գիտաճյուղից հրաժարումը չի կարող իր բացասական հետևանքները չունենալ նաև հայերենագիտության զարգացման վրա:

Բ.գ.թ., դոց. Թ. Տոնոյանն իր խոսքում ասաց, որ կարելի է նորից դիմել ԵՊՀ ղեկավարությանը՝ խնդրելով բացառության կարգով այդ ամբիոնները չմիավորել:

Մյուս ելույթ ունեցողները նշեցին, որ որևէ մեկը չի ուզում ամբիոնների արհեստական միավորում, սակայն ներկա պայմաններում նման միացումը կարող է կանխել գոնե ավելի խոշոր միավորումները՝ հնարավորություն տալով նշված գիտաճյուղերը զարգացնել արդեն միավորյալ ամբիոնների կազմում:

Այնուհետև գիտխորհուրդը միաձայն որոշեց ամբիոնների միացման քվեարկությունը կազմակերպել բաց: Պրոֆ. Ա. Ավագյանը քվեարկության դրեց ընդհանուր լեզվաբանության և հայոց լեզվի պատմության ամբիոնները ու

գրականության տեսության և գրաքննադատության ամբիոնը ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի հետ միավորելու հարցը:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն** – 1. Ելնելով գիտխորհրդում կատարված բաց քվեարկության արդյունքներից /գիտխորհրդի 36 անդամներից քվեարկությանը մասնակցել է 33 – ը /24 կողմ, 6 դեմ, 3 ձեռնպահ/՝ ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում միավորել ընդհանուր լեզվաբանության և հայոց լեզվի պատմության ամբիոնները ու գրականության տեսության և գրաքննադատության ու ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնները:

2. Ամբիոնների վերջնական անվանումները հստակեցնել ավելի ուշ:

**Օրակարգի 2 - թղ հարցի** առթիվ մանկավարժական և արտադրական պրակտիկա ունեցող համապատասխան ամբիոնների վարիչներն նշեցին, որ ուսանողների շրջանում պրակտիկայի ընթացքից դժգոհություններ չեն եղել, ղեկավարներն էլ պարբերաբար հանդիպել են ուսանողներին:

Ելույթ ունեցողները նաև հույս հայտնեցին, որ արդյունավետ պրակտիկան էապես կնպաստի ուսանողների գործնական հմտությունների զարգացմանը:

**Օրակարգի 3 - թղ հարցի** առթիվ ֆակուլտետի ղեկան պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ ֆակուլտետի հեռակա բաժնում հաճախումների վիճակը այնքան էլ գոհացուցիչ չէ: Որոշ ուսանողներ հաճախակի բացակայում են, ժամանակին ղեկանատ չեն ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթերը: Գրեթե նույն վիճակն է նաև առկա բաժնի բարձր կուրսերում: Պրոֆ Ավագյանը նշեց նաև, որ որոշ դասախոսներ ժամանակին և ամբողջական չեն լրացնում դասամատյանները, իսկ ֆակուլտետի որոշ աշխատակիցներ պատշաճ կարգով չեն հետևում ախատանքային կարգապահությանը: Պրոֆ Ավագյանը ամբիոնների վարիչներին հանձնարարեց նշված հարցերի կապակցությամբ քննարկումներ անցկացնել ամբիոններում:

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՆ՝**

**ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ**

**ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝**

**ԴՈՑ. Ա. ԳԱԼՍՏՅԱՆ**